

ԵՎՐՈՊԱՅԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ե Ա Հ Կ Երևանյան գրասենյակ

Հ Ե Տ Ա Զ Ո Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԻ ԽԱԽՏԱՄԲ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՉԱՆՑԱԾ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ
ԻՄՊԼԵՄԵՆՏԱՑԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան 2008

Այս ուսումնասիրությունը պատվիրվել է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից՝ վերջինիս և Ազգային Ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի միջև 2008 թվականի հոկտեմբերի 17-ին կնքված հուշագրի շրջանակներում:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

- Մեթոդաբանություն
- «Հաշտեցման» իրավական մեխանիզմների ներդրում

1. Օրենքի կիրառման շրջանակը:

Ա. Ժամկետային զինվորական ծառայության անցնելու պարտավորության բնույթը:
Փաստացի չծառայած լինելու հանգամանքով առաջնորդվելը:

Բ. Անձի կարգավիճակից բխող գործոնների ազդեցությունը:

- Առողջական գործոն:
- Գիտամանկավարժական (կրթական) գործոն:
- Ընտանեկան դրություն:
- ՀՀ կառավարության որոշման առկայություն:
- Երկքաղաքացիության առկայություն:

Գ. Պահեստագործի սպաների նկատմամբ օրենքի կիրառման առնաձևահատկությունները:

2. Օրենքի կիրառման ընթացքում հանդիպող ընթացակարգային բնույթի խոչընդոտները/բաց թողումները:

3. Քրեական հետապնդման դադարեցում:

- ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի կիրառելիությունը քննարկվող օրենքի համատեքստում:
- Միջգերատեսչական հանձնաժողովի և դատախազության միջև աշխատանքի կազմակերպումը/բաժանումը:

4. Օրենքի գործածության թափանցիկությունը և դրա նկատմամբ վերահսկողության ապահովումը:

Ե Ջ Բ Ա Կ Ա Յ ՈՒ Թ Յ ՈՒ Ն - Ա Մ Փ Ո Փ ՈՒ Մ

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

ա/ Վերլուծության առարկան և մեթոդաբանություն

2003 թ. դեկտեմբերի 17-ին ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունվեց ՀՀ գործող օրենսդրության համակարգին «անձանոթ» ինքնատիպ մի իրավական ակտ՝ որը կոչվում է *«Մահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենք* (ստորև՝ Օրենք): Օրենքի ընդունումը ՀՀ օրենսդիր մարմնի կողմից դիտվեց որպես երկրի շահերից բխող անհրաժեշտություն: Չանդրադառնալով Օրենքի ընդունման անհրաժեշտության հարցերի մանրամասն քննարկմանը, սույն հետազոտության ուշադրության կենտրոնն ուղղենք օրենքի իմպլեմենտացիայի հիմնախնդիրների վերլուծությանը, որոնք են.

1. Օրենքի կիրառական ասպեկտների ուսումնասիրությունը, իրավական հակասությունները ու բացթողումները ներկայացնելը,

2. Գիտարկված կոնկրետ գործերի հիման վրա ի հայտ եկած և կիրառման հետ կապված խոչընդոտների ու խնդիրների վերհանումը,

3. Զննարկված հակասությունների և դրանց հետևանք հանդիսացող խնդիրների լուծման մեխանիզմների առաջարկումը:

Ուսումնասիրության ընթացքում հանդիպումներ, գրույցներ ենք ունեցել.

1. Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի աշխատակազմի հետ՝ կատարելով Օրենքի կիրառման հետ կապված բողոքների, ինչպես նաև գրասենյակում առկա տեղեկատվական բազայի հետազոտություն,

2. ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի փորձագետների հետ՝ Օրենքի ընդունման նախապատմության և նպատակադրվածության վերաբերյալ հարցադրումներով,

3. Իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների հետ՝ «Ա. Գ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ-ի հետ՝ առանձին քաղաքացիների իրավունքների պաշտպանության և նրանց կողմից արձանագրված օրենքի կիրառման խախտման դեպքերի հետ կապված: Նրանց կողմից տրամադրված տեղեկատվությունը մեծապես պայմանավորեցին մեր հետազոտության առարկան կազմող գործերը,

4. ՀՀ կառավարության աշխատակազմի պետաիրավական և իրավաբանական վարչությունների հետ՝ պարտադիր զինվորական ծառայությունից ազատման, տարկետման վերաբերյալ ՀՀ կառավարության անհատական որոշումների ընդունման գործընթացի առումով,
5. ՀՀ պաշտպանության նախարարության իրավաբանական վարչության հետ՝ Օրենքի իրավաընկալման և պաշտպանական գերատեսչությունում դրա կիրառելիությունն ուղղորդող հրահանգների և ցուցումների վերաբերյալ,
6. ՀՀ զվհավոր դատախազության ընդհանուր բնույթի հանցագործությունների գործերով վարչության հետ՝ պարտադիր զինծառայությունից խուսափած քաղաքացիների նկատմամբ քրեական հետապնդման դադարեցման, ինչպես նաև միջգերատեսչական հանձնաժողովի ու դատախազության փոխհարաբերության հարցերով,
7. ՀՀ դատական դեպարտամենտի հետ՝ դատական պրակտիկայի ուսումնասիրության նպատակով:

բ/ «Հաշտեցման» իրավական մեխանիզմների ներդրում

Հազարավոր Հայաստանի քաղաքացիներ, տարբեր պատճառներով հայտնվելով արտասահմանյան երկրներում, քրեական պատասխանատվության սպառնալիքի ազդեցության տակ խուսափում են վերադառնալ: Չինվորական ծառայությունից խուսափելն էական ու լուրջ խնդիր էր ոչ միայն նրանց (մասնավորապես ՀՀ անձնագիր չստանալով կամ դրա ժամկետը չերկարացնելով նրանք հայտնվում էին անորոշ կարգավիճակի մեջ) այլ նաև վերջիններիս ընտանիքի անդամների համար՝ սահմանափակելով նրանց քաղաքացիական մի շարք իրավունքներ (օրինակ՝ զինծառայությունից խուսափածի ընտանիքի անդամների հյուպատոսական մարմնում հաշվառման կանգնելու կամ երեխայի համար ծննդյան վկայական տալու կամ ենթադրենք համատեղ գույքը վաճառելուց նրա համաձայնությունը ստանալու և մի շարք այլ նմանատիպ դեպքերում):

Չկարողանալով ձեռք բերել կացության որևէ կարգավիճակ, նրանք ակամայից դառնում են անօրինական միգրանտներ՝ ենթարկվելով աշխատանքային ու տարաբնույթ այլ շահագործումների: Նրանց «վերադարձ»-ի ապահովման համար անհրաժեշտ էր որոշակի ընթացակարգի ներդրում: Այս օրենքի ընդունման հրատապությունը ու կարևորությունը անվիճելի էր, որը բխում էր նաև հանրային շահերից, քանի որ օրենքի ընդունմամբ ենթադրվում էր զգալի չափերի վճարների մուտքագրում, ինչն այսօրվա հեռանկարից կարող ենք հաստատել, որ արդարացված է:

«Հաշտեցման» ինստիտուտի տարրերի ներդրմամբ առաջին անգամ հայ իրավակիրառ պրակտիկայում փորձ կատարվեց լուծել 1992-2004 թթ. (իսկ օրենքի հետագայում փոփոխությունների արդյունքում մինչ 2007թ-ի հոկտեմբերի 31-ը) ընթացքում պարտադիր զինվորական ծառայությունից խուսափած քաղաքացիների քրեական պատասխանատվության ենթարկելու խնդիրը՝ համապատասխան պահանջների կատարման արդյունքում նրանց ազատելով քրեական հետապնդումից: «Հաշտեցման գործընթացը» լայնորեն կիրառելի է շատ զարգացած երկրների քրեաիրավական պրակտիկայում, որը որպես կանոն քրեական հետապնդումը դադարեցնելու կապակցությամբ դրսևորվում է հանցագործության մեջ «մեղադրվող անձի» և դատախազի միջև՝ համապատասխան համաձայնության կայացմամբ, որի օրինականությունը վավերացնում է դատարանը (երբեմն այդ պրոցեսին ներգրավվում են նաև անկախ միջնորդները՝ մեղիատոր):

Քննարկվող Օրենքի համատեքստում դատարանի դերը կլիներ անառարկայական՝ այն հիմնավոր պատճառաբանությամբ, որ հաշտեցման այս պրոցեսում դատախազի կողմից հայեցողական բնույթի լիազորությունների կամ այլընտրանքային որոշումների կայացումը հավասարեցված է զրոյի: Ուստի վերահսկողության լրացուցիչ լծակ սահմանելը բնականաբար անհնար էր: Ավելին, Օրենքին համապատասխան հաշտեցումը իրականացվում է զինծառայությունից խուսափած անձի և միջգերատեսչական հանձնաժողովի միջև՝ առանց դատախազի մասնակցության, իսկ քրեական հետապնդումից ազատման խնդիրը հանդիսանում է դրանից անհանգստացնող «մեխանիկական» հետևանք¹:

Հաշտություն կնքելու միջոցով պարտադիր զինվորական ծառայությունից խուսափած անձը քրեական պատասխանատվությունից ազատվելու դիմաց ստանձնում է սահմանված չափի գումարը վճարելու պարտավորություն: Օրենքով նախատեսված «վճար»-ը հանդիսանում է ինքնատիպ մի պատիժ, որի մուծման դիմաց պետք է դադարեցվի անձի նկատմամբ քրեական հետապնդումը:

Փոխադարձ համաձայնության արդյունքում մի կողմից լուծվում է պարտադիր զինվորական ծառայությունից խուսափած անձանց քրեական հետապնդման խնդիրը, մյուս կողմից կնքված գործարքի արդյունքում պետության կողմից նշված հատուկ հաշվին մուտքագրվում են գումարներ, որոնք պետք է ծառայեն պաշտպանական կարիքների համար: Երկկողմանի «փոխադարձ շահավետ» այս գործընթացը կոչված է նաև վերականգնելու սոցիալական արդարությունը և օրենքի առաջ բոլորի հավասարության սկզբունքը՝

¹ Չնայած նշենք, որ եղել են դեպքեր երբ զինծառայությունից խուսափած անձանց նկատմամբ, որոնց վրա չէր տարածվում օրենքի գործողությունը, դատախազությունը իրադրության փոփոխության հիմքով դադարեցրել է քրեական հետապնդումը՝ օրենքով նախատեսված վճարները մուծելու պայմանով:

զինծառայությունից խուսափած անձանց նման եղանակով մասնակից դարձնելով ՀՀ պաշտպանությանը:

Այսպիսով, օրենքի վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել դրա կիրառման հետևյալ նախապայմանները.

- Չինծառայությունից խուսափած անձը հանդիսանում է ՀՀ քաղաքացի: Այս հարցի քննարկումը ձեռք է բերում հատուկ կարևորություն, երբ անձը մինչև 18 տարեկան դառնալը ձեռք է բերել այլ պետության քաղաքացիություն:

- Նա խախտել է պարտադիր զինծառայության անցնելու օրենքով սահմանված կարգը 1992 թվականի աշնանային զորակոչից մինչև 2007 թվականի հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում:

- Նշված ժամանակահատվածում լրացել է նրա 27 (պահեստագործի սպաները՝ 35) տարին կամ մինչև 27 (35) տարին լրանալը առկա են "Չինսպարտության մասին" ՀՀ օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ զորակոչից տարկետում ստանալու հիմքեր:

- Պարտադիր զինվորական ծառայությունից խուսափած անձի՝ օրենքն իր նկատմամբ կիրառելու ցանկության դրսևորումը (դիմումը): Պետք է պարզաբանել, որքանով է սկզբունքային զինծառայությունից խուսափած անձի կամահայտնության ժամանակը, կարող է արդյո՞ք օրենքն իր նկատմամբ կիրառելու ցանկությունը նա հայտնի ասենք իրավապահ մարմինների կողմից "բռնվելուց" հետո:

- Ներկայացված դիմումների հաստատումը Միջգերատեսչական, այնուհետ՝ հանրապետական հանձնաժողովների կողմից: Անհրաժեշտ է պարզել Միջգերատեսչական հանձնաժողովի լիազորությունը սահմանափակվում է միայն փաստի հաստատմամբ, թե քվեարկության արդյունքում հնարավոր են նաև «այլընտրանքային» որոշումների կայացում: Հանձնաժողովի կողմից սուբյեկտիվիզմի դրսևորումն որքանո՞վ է հավանական ու իրավաչափ:

- Սահմանված գումարի վճարում: Ուշադրություն պետք է դարձնել գումարի վճարման ժամկետների և կարգի այլընտրանքային մեխանիզմների կիրառմանը:

- Քրեական հետապնդման դադարեցում: Հանրապետական հանձնաժողովի կողմից՝ դիմումին վերջնական հավանություն տալուց հետո դատախազության կողմից քրեական գործի կարճումը հանդիսանում է արդյո՞ք «մեխանիկական» գործընթաց, թե գործի հանգամանքների վերաբերյալ ողջամիտ կասկածի պարագայում հնարավոր է ներկայացված քաղվածքն հիմք չընդունել և չդադարեցնել քրեական հետապնդումը՝ կատարելով «լրացուցիչ» ուսումնասիրություն:

1. Օրենքի կիրառման շրջանակը

Օրենքի կարգավորման առարկան ընդգրկում է կոնկրետ ժամանակահատվածում՝ (1992 թվականի աշնանային գորակոչից մինչև 2007 թվականի հոկտեմբերի 31-ը) կոնկրետ ստատուսի անձանց (զինվորական ծառայության չգորակոչված, գորակոչից խուսափած 27, իսկ պահեստագործի սպաների դեպքում՝ 35 տարին լրացած կամ մինչև 27 (35) տարին լրանալը «Զինապարտության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում ստանալու հիմքեր ձեռք բերած ՀՀ քաղաքացիների) զինվորական ծառայության հետ կապված հարաբերությունները:

Ա. Ժամկետային զինվորական ծառայության անցնելու պարտավորության բնույթը

«Զինվորական ծառայության չգորակոչված», այնուհետ փակագծում նշված *«գորակոչից խուսափած»*, ինչպես նաև օրենքի հաջորդ մասերում *«պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիներ» տերմինների* նախատեսումը պաշտպանական գերատեսչությանը հիմք է տալիս սույն օրենքի գործողության շրջանակը մեկնաբանել ընդարձակ՝ ելնելով *«փաստացի»* ծառայած կամ չծառայած լինելու հանգամանքից: Ըստ այդ գերատեսչության օրենքի կարգավորումը տարածվում է ՀՀ երբևէ (ներկա և նախկին) այն քաղաքացու վրա, որը չի ծառայել ՀՀ զինված ուժերում կամ օրենքով նախատեսված հիմքերով չի ազատվել կամ չի ստացել զինվորական ծառայությունից տարկետում: Այսինքն՝ զինվորական ծառայություն չանցնելը հավասարագոր է դրանից խուսափելուն՝ անկախ այն հանգամանքից անձը ենթարկվել է զինվորական հաշվառման թե ոչ, ստացել է սահմանված կարգով զինկոմիսարիատ ներկայանալու ծանուցագիր, հանդիսանում է ՀՀ քաղաքացի և այլն:

Օրինակ՝

Ա. Ո. (ծնված 1981թ), որի ծնողները բաժանված են, Բյուրական համայնքում հոր՝ 1996թ. դիմումի հիման վրա համայնքի ղեկավարի կողմից ապօրինի հանվում է հաշվառումից և ապրելով մոր հետ, չունենալով մշտական բնակության վայր չի կարողանում հաշվառվել և ըստ այդմ՝ չի անցնում զինվորական հաշվառում: Անորոշ կարգավիճակով որպես անօթևան Ա. Ո. ապրում է տարբեր վայրերում չունենալով նաև անձնագիր: Այսօր փաստացի նա չի անցել զինվորական ծառայություն, չկա նաև նրա նկատմամբ հարուցված քրեական գործ:

Մեկ այլ դեպքում Բ. Ս. 16 տարեկանում զինվորական հաշվառման է ենթարկվում, Վարդենիսի զինկոմիսարիատում, սակայն ինչ-ինչ պատճառներով (քաղաքացու անձնական գործի կորցնելու, կամ զինկոմիսարիատի աշխատակցի անփութության կամ այլ դիտավորության արդյունքում), նրան չեն կանչում զինծառայության: Վերջինիս նկատմամբ հարուցված չի լինում նաև քրեական գործ: 27 տարեկանը լրանալուց հետո Բ. Ս. ներկայանում է զինկոմիսարիատ և պահանջում է, որ իրեն տան զինվորական գրքույկ, պատճառաբանելով, որ ինքը չի ստացել զինկոմիսարիատ ներկայանալու

վերաբերյալ ծանուցագիր, այդ ամբողջ ժամանակաընթացքում գտնվել է հաշվառման վայրում և սպասել, թե երբ պետք է իրեն գորակոչեն:

Պաշտպանական գերատեսչությունը նման դեպքերի համար պատճառաբանում է, որ ՀՀ Սահմանադրության 46-րդ հոդվածի համաձայն ՀՀ պաշտպանությանը մասնակցելը յուրաքանչյուր քաղաքացու պարտականությունն է և քաղաքացին ինքը պետք է նաև ձեռնամուխ լիներ իր պարտականությունների կատարմանը: Այդ առումով, քաղաքացին պարտավոր է 18 տարեկան դառնալուց հետո մինչև 27 տարեկան դառնալն ինքնուրույն ներկայանա իր հաշվառման վայրի զինկոմիսարիատ և ճշտել, թե ինչու իրեն չեն կանչում զինծառայության: «Անգործությունը» փաստորեն գնահատվում է, որպես զինծառայությունից խուսափում: Իրավակիրառողներն առաջնորդվում են այն գաղափարախոսությամբ, որ առաջին հերթին քաղաքացին պետք է մտահոգված լինի իր պարտականության ժամանակին և պատշաճ կատարմամբ՝ լավ գիտակցելով դրա չիրականացման բացասական հետևանքները: Ի պաշտպանություն իշխանության որդեգրած մոտեցմանը կարող ենք նշել, որ ՀՀ քաղաքացին պարտավոր է իրազեկել իր բնակության փոփոխման մասին, ինչն էլ հնարավորություն կտա պաշտպանական գերատեսչությանը կատարել իր վարչական գործառնությունները:

Մյուս կողմից պաշտպանության մասնակցելու ՀՀ քաղաքացու պարտականությունը ի կատար է ածվում օրենքով սահմանված կարգով: «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն *«պարտադիր զինվորական ծառայության գորակոչը հայտարարելուց հետո բոլոր գորակոչիկները պարտավոր են ծանուցագրում նշված ժամկետում ներկայանալ այն զինվորական կոմիսարիատ, որտեղ նրանք հաշվառված են»:* Հարց է ծագում արդյոք ծանուցագիրը չի հանդիսանում զինկոմիսարիատ ներկայանալու պարտականությունը բովանդակող միակ փաստաթուղթը:

Անհրաժեշտ է ճշտել զինվորական հաշվառում չանցկացնելու պատճառները, քայլեր ձեռնարկել դրանք վերացնելու ուղղությամբ (գործի կորուստ): Վերը նշված օրինակում, եթե զինկոմիսարիատի աշխատակցի անփութության հետևանքով կորել է գորակոչիկի անձնական գործը, և նա չի կանչվել զինծառայության, անհրաժեշտ է անցկացնել ծառայողական քննություն, ինչպես նաև պարզել գորակոչիկի չարամիտ վարքագծի առկայությունը:

Նման դեպքերից մասամբ խուսաթելու համար զինկոմիսարիատները բացի ծանուցագրեր ուղարկելուց այցելում են նաև գորակոչիկի հաշվառման վայր՝ համոզվելու, որ անձը բնակվում է տվյալ հասցեում, իսկ եթե ոչ՝ փորձում ճշտել նրա փաստացի գտնվելու վայրը: Արդյունքում կազմվում և գորակոչիկի անձնական գործին կցվում է համապատասխան արձանագրություն:

Պետական մարմինը պատասխանատու է քաղաքացու կողմից պաշտպանությանը մասնակցելու պարտականության պատշաճ կատարման գործընթացի համար: Թերությունների

առկայության դեպքում անհրաժեշտ է անհատապես ուսումնասիրել գորակոչիկի կողմից չարամիտ վարքագծի առկայությունը:

Բ. Անձի կարգավիճակից բխող գործոնների ազդեցությունը:

Ընդհանուր կանոնը հետևապես է՝ պարտադիր զինվորական ծառայություն չանցած և 27 տարին լրացած զինապարտ քաղաքացին կարող է յուրաքանչյուր խուսափած գորակոչի համար նվազագույն աշխատավարձի 100-պատիկի չափով գումար վճարել, որի հետևանքով անձի նկատմամբ հարուցված քրեական գործը կարճվում է, տրվում զինվորական գրքույկ և հաշվառվում է պահեստագրում:

Օրենքի 2-րդ հոդվածը, որը վերնագրված է «Պարտադիր վճարների դրույքաչափեր» տալիս է օրենքի գործողությունից «օգտվող» անձանց որոշակի դասակարգում, նախատեսում յուրաքանչյուր խմբի համար անբացատրելի տարբեր դրույքաչափեր՝ անգամ սահմանելով Օ-ական վճար, եթե ասենք անձն ունի 3 զավակ:

- Առողջական գործոն

Քննարկվող հոդվածի 2-րդ կետի առաջին ենթակետը *նվազագույն աշխատավարձի 30-պատիկի չափով վճարի մուծման իրավունք է սահմանում պարտադիր զինվորական ծառայություն չանցած և հետագայում պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու հիմքեր ձեռք բերած այն քաղաքացիներին, ովքեր հանրապետական գորակոչային հանձնաժողովի կողմից առողջական վիճակի պատճառով ճանաչվել է զինծառայության համար ոչ պիտանի՝ հանվելով զինվորական հաշվառումից*: Առավել հետաքրքրական են այն դեպքերը, երբ գործի քննությամբ հնարավոր չէ հաստատել, թե երբ է անձի մոտ առաջացել այդ հիվանդությունը՝ մինչ 18 տարեկանը, թե դրանից հետո:

Օրինակ՝

Դ. Ա. ծնված 1987թ-ի մայիսի 6-ին կցագրվել է էրեբունի զինկոմիսարիատում: 2005թվականին վերջինիս ծանուցվել է ներկայանալ զինկոմիսարիատ, սակայն ծանուցումը փոստով հետ է վերադարձվել՝ հաշվառված հասցեում որևէ մեկի փաստացի չբնակվելու պատճառով: Չինկոմիսարիատը գորակոչիկի գործն ուղարկում է էրեբունի և Նուբարաշեն համայնքների դատախազություն, ուր նրա նկատմամբ ՀՀ քր. օր-ի 327-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվում է քրեական գործ և հայտարարվում հետախուզում: 2007թ. հուլիսի 10-ին Դ. Ա. հայտնաբերվում է և կալանավորվում: Վերջինս տեղեկացնում է, որի ինքը տառապում է էպիլեպտիկա հիվանդության առաջին ստադիայով (այսինքն հաճախակի նուպաների կամ արտահայտված հոգեկան խանգարումների առկայություն), որի դեպքում քաղաքացին պիտանի չէ զինծառայության՝ հաշվառումից հանելով: Բժշկական քննությամբ հաստատվում է հիվանդության փաստը: Օրենքի սույն կետի համաձայն նրանից պահանջում են վճարել 5 խուսափած գորակոչի համար նախատեսված վճար՝

քրեական գործը կարճելու համար: Վերջինս հրաժարվում է այն վճարել՝ պատճառաբանելով, որ ինքն վաղ հասակից տառապում է զինվորական ծառայությունից ազատվող հիվանդությամբ: Բժշկական եզրակացությամբ հնարավոր չէ հաստատել, թե երբ է անձի մոտ առաջացել այդ հիվանդությունը՝ մինչ 18 տարեկանը, թե դրանից հետո, քանի որ այդ հիվանդությունն ունի իր զարգացման գաղտնի շրջանը և հնարավոր է, որ ախտանիշը ի հայտ է եկել միայն հետագայում:

Դատախազությունից պնդեցին, որ սահմանադրական հայտնի սկզբունքի համաձայն չփարատված կասկածները մեկկաբանվում են հոգուտ մեղադրյալի և նման դեպքերում ուղղակի անթույլատրելի է քրեական գործի հետագա շարունակությունը: Պետք է նկատել, որ այստեղ հաշվի չառնվեց այն հանգամանքը, որ անձը 18 տարեկանում չէր ներկայացել կամ որևէ կերպ չէր տեղեկացրել պետական մարմնին իր հիվանդության մասին՝ դրանով իսկ ցուցաբերելով անբարեխիղճ վարքագիծ:

- Գիտամանկավարժական (կրթական) գործոն

ա/ Պարտադիր զինվորական ծառայության ազատման հիմքերից է գիտական աստիճան (գիտության թեկնածու կամ գիտության դոկտորի) ունենալու և մասնագիտական, գիտական կամ մանկավարժական գործունեությամբ զբաղվելու հանգամանքը: Այս դեպքում յուրաքանչյուր խուսափած զորակոչի համար մինչ գիտական աստիճանի ստանալն ու մասնագիտական, գիտական կամ մանկավարժական գործունեությամբ զբաղվելը պարտավոր է նվազագույն աշխատավարձի 50-ապատիկի չափով գումար վճարել: Հարկ է նշել, որ գործնականում այս կետի կիրառման համար առաջանում են խոչընդոտներ գիտական աստիճանների ոչ միանման ընկալման պատճառով և զորակոչից խուսափած անձանց “հարկադրում” վճարել 100 ապատիկը՝ հիմք ընդունելով սահմանված վճարի ընդհանուր չափը:

բ/ Օրենքի քննարկվող հոդվածի 4-րդ կետը նվազագույն աշխատավարձի 150-ապատիկի չափով վճարի մուծման իրավունք է սահմանում պարտադիր զինվորական ծառայություն չանցած և հետագայում պարտադիր զինվորական ծառայությունից ուսումը շարունակելու համար տարկետման իրավունք ստանալու հիմք ձեռք բերած զինապարտ քաղաքացիների համար: Այսինքն՝ անձը խուսափելով զինվորական ծառայությունից կարող է հետագայում ընդունվել ուսումնական հաստատություն՝ ստանալով տարկետման իրավունք, որն էլ թույլ է տալիս խուսափած տարիների համար օրենքով սահմանված չափի գումար վճարելով ազատվել քրեական պատասխանատվությունից:

«Չինապարտության մասին» ՀՀ օրենքի 14-րդ կետում սպառիչ թվարկվում են այն անձանց շրջանակը, որոնց ուսումը շարունակելու համար տրվում է տարկետում: Դրանք ենք հանդիսանում պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների (այդ թվում՝

օրդինատուրա, ինտերնատուրա և մագիստրատուրա) ցերեկային ուսուցման ուսանողները, ինչպես նաև ՀՀ կառավարության հաստատած ցանկում ընդգրկված միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ցերեկային ուսուցման ուսանողները, պետական գիտակրթական համակարգի ասպիրանտուրայում պետական պատվերով առկա ուսուցմամբ սովորողները, պետական պատվերով, միջպետական և միջգերատեսչական համաձայնագրերով օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները, օրդինատուրայում, ինտերնատուրայում, մագիստրատուրայում կամ ասպիրանտուրայում սովորողները և դատական դպրոցի ունկնդիրները:

Գործնականում անհնարին է զինծառայությունից խուսափած անձի կողմից վերոնշյալ հաստատություններ ընդունվելը, քանի որ արական սեռի անձանցից ՀՀ օրենսդրության համաձայն պահանջվում է ներկայացնել զինգրքույկի պատճեն կամ դրան փոխարինող ժամանակավոր կամ զորակոչային տեղամասից համապատասխան տեղեկանք: Ուսումնասիրության արդյունքում մենք չհանդիպեցինք օրենքի այս նորմի կիրառման պրակտիկ որևէ դեպքի:

- Ընտանեկան դրություն

ա/ Քննարկվող հոդվածի 5-րդ կետը, «Ձինապարտության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածին համահունչ թվարկելով ընտանեկան դրության բերմամբ տարկետման իրավունք ստանալու հիմքերը (ովքեր ունեն անաշխատունակ հայր կամ մայր և նրանք էլ չունեն անաշխատունակ և պարտադիր զինծառայության մեջ չգտնվող այլ զավակ, երկու երեխա, առանց մոր մեծացող մեկ երեխա, կամ առաջին կամ երկրորդ կարգի հաշմանդամ կին և այլն), դրանք հետագայում ձեռք բերած զինծառայությունից խուսափած քաղաքացիներին հնարավորություն է տալիս յուրաքանչյուր խուսափած զորակոչի համար նվազագույն անաշխատավարձի 30-պատիկի չափով վճարելու դեպքում ազատվել քրեական պատասխանատվությունից և մինչ 27 տարեկան լրանալը ստանալ զինվորական ծառայությունից տարկետում: Այս դեպքում «ահագանգման» առիթը՝ զորակոչիկի մինչ 27 տարին դառնալը ընտանեկան դրությամբ ձեռք բերված տարկետման հիմքերի գոյության ստուգումն է, երբ այդ զորակոչիկը գտնվում է հանրապետությունից դուրս: Այսօր գործընթացի պատասխանատու պաշտոնատար անձինք նշում են, որ սույն կետի համաձայն ներկայացվող փաստաթղթերի զգալի մասը կեղծ են և չկան բավարար իրավական մեխանիզմներ դրանք ստուգելու համար:

բ/ Անճնական կամ ընտանեկան գործոնները վերլուծելիս մտահոգիչ է նաև դրանց համար նախատեսված վճարների դրույքաչափերի անտրամաբանական տարբերությունները: Որևէ կերպ օրենքի գաղափարախոսության կոնտեքստում չի տեղավորվում Օրենքի 6-րդ կետում նախատեսված պարտադիր զինվորական ծառայության չանցած և հետագայում 3 ու ավելի երեխա կամ առանց մոր մեծացող 2 երեխա ունեցողներին քրեական հետապնդումից ազատելու դիմաց որևէ վճար չնախատեսելը:

- ՀՀ Կառավարության որոշման առկայությունը:

Ուշագրավ է Օրենքի 2-րդ հոդվածի 3 և 8-րդ կետերի իմպլեմենտացիան, որոնք վերաբերում են պարտադիր զինվորական ծառայություն չանցած և հետագայում կառավարության որոշմամբ ծառայությունից ազատված կամ տարկետում ստացած լինելու դեպքերին:

ա) *Ձինվորական ծառայության ենթակա քաղաքացին մինչև ՀՀ կառավարության զինծառայությունից ազատելու վերաբերյալ որոշման ընդունումը, յուրաքանչյուր խուսափած գորակոչի համար կարող է նվազագույն աշխատավարձի 50-պատիկի չափով վճարել և ազատվել քրեական պատասխանատվությունից:*

Այս դրույթը բազմաթիվ հարցեր է առաջադրում

- ինչ չափանիշներով է առաջնորդվում ՀՀ կառավարությունը պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու վերաբերյալ որոշում կայացնելիս:

- արդյոք հիմնավոր ու իրավաչափ է, երբ այն քաղաքացու նկատմամբ, ով խուսափել է զինծառայությունից ՀՀ կառավարությունը պարտադիր զինծառայությունից ազատման որոշում է կայացնում:

ՀՀ կառավարությունը «Ձինապարտության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի «գ» ենթակետի համաձայն իրավունք ունի իր հայեցողությամբ որոշ քաղաքացիներին ազատել պարտադիր զինվորական ծառայությունից: Օրենքի նշված նորմը չի պարունակում կոնկրետ չափանիշներ կամ հղում կոնկրետ չափանիշներ պարունակող որևէ իրավական ակտին, որոնց շրջանակներում պետք է գործի Կառավարությունը՝ պարտադիր զինվորական ծառայությունից քաղաքացիներին ազատելու որոշում կայացնելիս: Նույնիսկ նմանատիպ մի շարք որոշումներում որևէ հիմնավորում կոնկրետ քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու վերաբերյալ չի նշվում:

Օրինակ՝

*ՀՀ կառավարության 7 մայիսի 2001թվականի թիվ 392 որոշում
«Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին կետի
«գ» ենթակետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.*

1. Ա. Պ-ին ազատել պարտադիր զինվորական ծառայությունից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2001 թվականի մայիսի 7-ից:

կամ

ՀՀ կառավարության՝ 13 մարտի 2008 թվականի թիվ 249-Ա որոշում.

*«Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին կետի
«գ» ենթակետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.*

Դ. Կ.-ին ազատել պարտադիր զինվորական ծառայությունից:

Գործող օրենսդրությամբ, զինվորական ծառայությունից ազատելը ՀՀ կառավարության բացառիկ իրավունքն է, որը կարող է տարածվել նաև զինծառայությունից խուսափած անձանց նկատմամբ: ՀՀ կառավարությունն այն իրականացնելիս «կաշկանդված» չէ որևէ այլ իրավական պահանջների պահպանմամբ և նույն հաջողությամբ կարող է մերժել՝ թեկուզև միևնույն կարավիճակով մեկ այլ անձի զինծառայությունից ազատվելու խնդրանքը:

բ) Ուշագրավ է ՀՀ կառավարության որոշմամբ զինծառայությունից տարկետման տրամադրման գործընթացը և ըստ այդմ նաև Օրենքի 2-րդ հոդվածի 8-րդ կետի իմպլեմենտացիան:

Զինվորական ծառայություն չանցած և հետագայում այլ հիմքերով զինվորական ծառայությունից տարկետման իրավունք ստանալու հիմք ձեռք բերած զինապարտ քաղաքացիները կարող են յուրաքանչյուր խուսափած գորակոչի համար նվազագույն աշխատավարձի 200-պատիկի չափով գումար մուծելով ազատվել քրեական պատասխանատվությունից:

Սույն կետի իրավական վերլուծությունն ուղղակի կապված է «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակիրառ պրակտիկայի հետ: Այդ նորմի հիման վրա ՀՀ կառավարությունը իրավունք ունի անհատական որոշումներով քաղաքացիներին և նրանց որոշակի կատեգորիաներին զինվորական ծառայությունից տարկետման իրավունք տրամադրել: Ինչպես ազատման այնպես էլ զինծառայությունից տարկետում ստանալու համար չկա որևէ արգելք, անգամ եթե տվյալ անձը խուսափել է զինվորական ծառայությունից:

ՀՀ կառավարության 2002 թվականի օգոստոսի 29-ի «Օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական կամ գիտակրթական հաստատություններ ընդունված ՀՀ քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում տալու կարգը հաստատելու մասին» թիվ 1394-Ն որոշմամբ փորձ կատարվեց կանոնակարգել արտերկրի բուհերում ՀՀ քաղաքացի ուսանողների զինծառայությունից տարկետման ստանալու գործընթացը: Այդ որոշմամբ ՀՀ կառավարությունն առանց բացառության

օտարերկրյա պետությունում սովորող ուսանողին պետք է ուսումնառության ողջ ընցացքում տրամադրի զինվորական ծառայությունից տարկետում՝ այդ ուսանողի կամ նրա օրինական ներկայացուցչի կողմից կրթության պետական կառավարման լիազոր մարմնի հետ գրավի պայմանագիր կնքելու դեպքում: Գրավադրվող գույքի նվազագույն գինը չպետք է պակաս լինի 8.5 միլիոն դրամից:

Տարկետումը տրամադրվում է մինչ 27 տարեկան դառնալը և քանի որ ուսումն ավարտած քաղաքացու համար չի լուծվում զինվորական ծառայություն խնդիրը, որպես կանոն նման դեպքերում այդ քաղաքացիները շարունակում են խուսափել զինծառայությունից և հայրենիք վերադառնալուց: Գործող պրակտիկան ցույց է տալիս, որ այս կատեգորիայի քաղաքացիները ներկայանում են միայն 27 տարին լրանալուց հետո և եթե մինչև 2007թ. հոկտեմբերի 31-ը նրանց 27 տարին լրացել է, ապա նրանք բնականաբար գերադասում են այլ հիմքով՝ նվազագույն աշխատավարձի 100-պատիկի չափով գումար մուծելով ազատվել ինչպես քրեական պատասխանատվությունից, այնպես էլ զինվորական ծառայությունից:

Պարզ չէ նաև հոգևորական հաստատության սաների զինվորական ծառայությունից տարկետման և հետագայում այդ անձանց զինծառայությունից ազատման գործընթացը: ՀՀ կառավարության 2000 թվականի հունվարի 13-ի թիվ 15 որոշման համաձայն պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետման իրավունք ունեն միայն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգևոր ճեմարանի, Արարատյան Հայրապետական թեմի Վազգենյան դպրանոցի և Շիրակի թեմի ընծայարանի սաները, իսկ մնացած և այլ երկրում գտնվող հայկական հոգևոր հաստատությունների (մասնավորապես՝ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց ժառանգավորաց վարժարանի և այլն) սաների կամ հոգևոր միաբանների համար ՀՀ կառավարությունը ստիպված է ընդունել զինծառայությունից տարկետման կամ ազատման որոշումներ²: Մեր օրենսդրությունում գոյություն ունեցող նմանատիպ բացերի ու թերությունների արդյունքում հնարավոր է, որ այս կարգավիճակի որոշ քաղաքացիներ չստանալով զինծառայությունից տարկետումներ՝ դառնան իրավախախտողներ:

- Երկրադարացիության առկայություն

Պարտադիր զինվորական ծառայություն չանցած և հետագայում այլ պետության քաղաքացիություն ձեռք բերած քաղաքացիները, եթե նրանց 27 տարին լրացել է մինչև 2007

² ՀՀ կառավարության 22 օգոստոսի 2002 թվականի N 1305-Ն, 26 դեկտեմբերի 2002 թվականի N 2087-Ա, 14 օգոստոսի 2003 թվականի N 1021-Ն, 21 ապրիլի 2005 թվականի N 467-Ա և մի շարք այլ նմանաբնույթ որոշումներ:

թվականի հոկտեմբերի 31-ը միայն յուրաքանչյուր գորակոչի համար նվազագույն աշխատավարձի 100-պատիկը վճարելու դեպքում կարող են ազատվել քրեական պատասխանատվությունից:

Օրենքի այս նորմի կիրառելիությունը կապված է քաղաքացիության, մասնավորապես երեխայի քաղաքացիության ճիշտ որոշման խնդրի հետ:

«Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կանոնի համաձայն մինչև 14 տարեկան երեխաները ձեռք են բերում իրենց ծնողների քաղաքացիությունը: Նմանապես, ՀՀ քաղաքացիությունը կորցրած ծնողների մինչև 14 տարեկան երեխան կորցնում է ՀՀ քաղաքացիությունը, եթե նա ձեռք է բերում այլ պետության քաղաքացիություն: Իսկ տարբեր քաղաքացիություն ունեցող ծնողները՝ փոխադարձ համաձայնությամբ են որոշում իրենց մինչև 14 տարեկան երեխայի քաղաքացիությունը:

Քաղաքացիության սկզբունքներից է նաև երեխայի կարծիքի հաշվառումը: «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ «ծնողների քաղաքացիությունը փոխելու դեպքում 14-18 տարեկան երեխաների քաղաքացիությունը փոխվում է միայն երեխաների համաձայնության առկայության դեպքում»: Հարկ է նկատել, որ որոշ դեպքերում պաշտպանության գերատեսչությունը ղեկավարվելով «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 3.1-րդ հոդվածի երկրորդ մասով, համաձայն որի «այլ պետության քաղաքացիություն ընդունած ՀՀ քաղաքացի չի ազատվում պարտադիր զինվորական ծառայությունից, անկախ այն հանգամանքից՝ ծառայել է նա այլ պետությունում, թե ոչ», առանց հաշվի առնելու թե երբ և որ տարիքում է անձը ձեռք բերել այլ պետության քաղաքացիություն՝ խախտելով ՀՀ քաղաքացիության մասին օրենքով սահմանված մի շարք դրույթներ: Այսպես օրինակ տղան 9 տարեկան հասակում ընտանիքով Հայաստանից տեղափոխվել է Բելորուս: Այնուհետև ծնողները իրենց անչափահաս երեխայի հետ միասին ստացել են Բելորուսի քաղաքացիություն՝ հրաժարվելով ՀՀ քաղաքացիությունից: Չնայած դրան պաշտպանական գերատեսչությունը նրան դիտեց ՀՀ քաղաքացի և գորակոչեց ՀՀ բանակ:

Հանդիպեցինք նաև դեպքեր, երբ ՀՀ-ում մշտապես բնակվող անձը դիտվում է ՀՀ քաղաքացի՝ չնայած հանդիսանում է այլ երկրի հպատակ և ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու խնդրանքով չի դիմել ՀՀ իշխանություններին:

Օրինակ

Ա. Կ. ծնված 29.12.1981թ. Ուկրաինայի Կերչ քաղաքում, Ռ-Գ քաղաքացի է դեռևս 07.11.1994թ-ից և Ռ-Գ նոր անձնագիր է ստացել 20.04.2000թ. Հայաստանում գտնվող Ռ-Գ դեսպանատան կողմից, որտեղ գտնվել է հաշվառման մեջ մինչև 2004թ-ը: Նրա մայրը Ս. Կ. նույնպես Ռ-Գ քաղաքացի է դեռևս 07.11.1994թ-ից:

Ա. Կ-ը 1999թ. ավարտել է Երևանի թիվ 7 միջն. դպրոցը և ընդունվել Երևանի Սլավոնական համալսարանի համաշխարհային տնտեսագիտության ֆակուլտետը: Համալսարանը ավարտելով

2004թ. հուլիսի 19-ին նա մեկնել է Ուկրաինա՝ հարազատների մոտ, դուրս գալով Հայաստանում գտնվող Ռ-Դ դեսպանատան հաշվառումից: 2004թ. սեպտեմբերին Երևանի Արաբկիրի տարածքային զինվորական կոմիսարիատից Ս. Կ-ն ստանում է ծանուցագիր իր որդու անունով, համաձայն որի նա պետք է ներկայանա տարածքային զինվորական կոմիսարիատ:

Անհասկանալիորեն Երևանի Արաբկիրի տարածքային զինվորական կոմիսարիատում 1999թ. ապրիլի 8-ին Ա. Կ-ին, վերցրել են զինվորական հաշվառման՝ հաշվի չառնելով այն հանգամանքը, որ նա Ռ-Դ քաղաքացի է: Մայրը իր որդու փոխարեն ներկայացել է տարածքային զինվորական կոմիսարիատ և բացատրություն տվել այն մասին, որ իր որդին Ռ-Դ քաղաքացի է և ներկայումս էլ գտնվում է Ուկրաինայում:

Արաբկիրի զինկոմիսարիատի կողմից հարցում է կատարվել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն, որտեղից ստացվել է պատասխան, որ Ա. Կ-ը ՀՀ քաղաքացու անձնագրով չի փաստաթղթավորվել: Չբավարարվելով այս ամենով ՀՀ զինվորական կոմիսարը 02.06.2004թ. թիվ 2/2820 գրությամբ դիմել է ՀՀ զինվորական դատախազություն՝ Ա. Կ-ի վերաբերյալ իրավաբանական պարզաբանում ստանալու համար: ՀՀ զինվորական դատախազության 15.07.2004թ. թիվ 1363 գրությամբ նշում, որ Ա. Կ-ը «Զաղաքացիության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո մշտական բնակվում է Հայաստանում, ավարտել է միջնակարգ դպրոցը և ուսումը շարունակել ԲՈՒՀ-ում: Այժմ էլ բնակվում է Երևան քաղաքում: Հաշվի առնելով վերոնշյալը, զին. դատախազությունը գտնում է ոչ նպատակային նրան հանել զինվորական հաշվառումից: Նա մեր քաղաքացին է:»

Այն հանգամանքը, որ անձը մշտապես բնակվել է Հայաստանի տարածքում թե ոչ, դա դեռևս չի նշանակում, որ անձը համարվում է ՀՀ քաղաքացի: Այս դեպքում փաստորեն ՀՀ քաղաքացիությունը պարտադրվում է ՀՀ-ում մշտապես բնակվող անձին³:

Մեկ այլ Օրինակում՝

Ա. Պ. ծնված 21.03.1983թ.-ին Երևանում, 1993թ. օգոստոսի 16-ից մշտական հաշվառման է վերցվում ՀՀ-ում Ռ-Դ դեսպանատան կողմից, որին 2000թ. մարտի 2-ին տրվում է Ռ-Դ անձնագիր: Նրա մայրը՝ Ա. Ջ. Ռ-Դ քաղաքացի է, իսկ հայրը՝ Խ. Պ.՝ ՀՀ քաղաքացի: 1995թ.-ին երբ ՀՀ-ում ընդունվեց «Զաղաքացիության մասին» ՀՀ օրենքը, Ա. Պ. եղել է ընդամենը 12 տարեկան և չի ընդունել ՀՀ քաղաքացիություն և չի ստացել ՀՀ անձնագիր: Նման դեպքում երեխայի քաղաքացիության հարցը պետք է լուծվի ծնողների համաձայնությամբ: Չնայած դրան, 2000թ. ապրիլի 10-ին Ա. Պ. 17 տարեկան հասակում տարածքային զինկոմիսարիատում անցել է բժշկական հանձնաժողով և ճանաչվել է պիտանի շարային ծառայության համար, այն դեպքում, երբ համապատասխան աշխատակիցներին տեղեկացվել է, որ նա հանդիսանում է Ռ-Դ քաղաքացի՝ ներկայացնելով Ռ-Դ անձնագրի պատճենը: Ա. Պ. անձնական գործի վրա նշվել է, որ Ռ-Դ քաղաքացի է, իսկ համապատասխան աշխատակիցները նրան հավաստիացրել են, որ այլևս իրեն չեն անհանգստացնի, բայց այնուամենայնիվ Պետրոսյանն անցել է այդ բժշկական զննությունը:

Սակայն 2005թ. փետրվարից ՀՀ Արաբկիրի տարածքային զինվորական կոմիսարիատի զինվորական հաշվառման բաժնից հեռախոսով պարբերաբար անհանգստացրել են Ա. Պ-ին՝ պահանջելով ներկայանալ տարածքային զինկոմիսարիատ, զինակոչիկների հաշվառման բաժին և անցնել բժշկական զննության: Նրա մայրը տեղեկացրել է, որ իր որդին հանդիսանում է Ռ-Դ քաղաքացի և «Զաղաքացիության մասին» Ռ-Դ օրենքի 18 հոդվածի բ կետի (ընդունված 1991թ.), նա ենթակա չէ զորակոչման այլ պետության տարածքում, ինչպես նաև 08.02.2005թ-ին գրավոր դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը, իսկ 17.02.2005թ-ին՝ ՀՀ գլխավոր դատախազությանը՝ իր որդուն զինվորական հաշվառումից հանելու խնդրանքով: 2005թ-ին հունիսին Ա. Պ. ավարտում է Երևանի հայ-ռուսական համալսարանի ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը և չի ներկայանում զինվորական ծառայության՝ համարվելով որպես զինծառայությունից խուսափող:

³ «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն ՀՀ-ում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձինք կամ օտարերկրյա քաղաքացի չհանդիսացող նախկին ԽՍՀՄ այլ հանրապետությունների քաղաքացիները կարող են ճանաչվել ՀՀ քաղաքացի, եթե մինչև 2009 թվականի դեկտեմբերի 31-ը դիմեն ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու համար:

Ուշագրավ է նաև ստորև բերված օրինակում ներկայացված փախստականների զինվորական հաշվառման և զինծառայության անցնելու վերաբերյալ գործերը:

Փախստական Է. Մ-ը, ծնվել է 10.04.1988թ. Ադրբեջանի Դաշքեսանի շրջ. Կուշչիի հիվանդանոցում: Հայտնի իրադարձությունների պատճառով 1988թ. ապրիլի 15-ին, իր ծնունդից մի քանի օր հետո, ծնողը Ադրբեջանից բռնագաղթել է Հայաստան և բնակություն հաստատել Բագրատաշեն գյուղում: Ադրբեջանից բռնագաղթելուն պես նրա ընտանիքը ստացել է փախստականի ընտանիքի վկայական: Է. Մ-ի ծննդյան վկայականը տրամադրվել է Երևանի Շենգավիթի ՔԿԱԳ բաժնի կողմից:

ՀՀ միգրացիայի և փախստականների վարչության կողմից (ներկայումս ՀՀ միգրացիոն գործակալություն) Է. Մ-ի 16 տարին լրանալուն պես 21.04.2005թ. տրամադրել է փախստականի վկայական:

Սակայն, 2005թ. ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյանի զինկոմիսարիատի կողմից Է. Մ-ը ծանուցում է ստացել բանակ գորակոչվելու մասին, ըստ որի համաձայն «Ձինապարտության մասին» ՀՀ օրենքի, Է. Մ-ը ենթակա է գորակոչման և առաջարկվել է ներկայանալ գորակոչային տեղամաս Նոյեմբերյանի պոլիկլինիկա, բժշկական զննության: Է. Մ-ի մայրը՝ Ա. Շ-ը, հիշյալ զինկոմիսարիատին տեղեկացրել է, որ նրա որդին փախստականի կարգավիճակ ունի և ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Այնուամենայնիվ, Նոյեմբերյանի զինվորական կոմիսարը 08.02.2006թ. գրավոր հարցում է կատարել ՀՀ միգրացիոն գործակալությանը՝ Է. Մ-ի փախստական հանդիսանալու մասին տեղեկատվություն ստանալու խնդրանքով: ՀՀ միգրացիոն գործակալությունից 03.03.2006թ. Նոյեմբերյանի զինվորական կոմիսարին հայտնել են, որ ըստ «Համակարգչային կենտրոն» ՊՈԱԿ տվյալների Է. Մ-ը որպես փախստական հաշվառված չէ: Մինևույն ժամանակ, մեկնաբանել, որ «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն Է. Մ-ը հանդիսանում է ՀՀ քաղաքացի, քանի որ ծնվել է ՀՀ-ում:

Հարցումներ է կատարվել ՀՀ զինկոմին, որը հայտնել է, որ Է. Մ-ն բանակ գորակոչելու գործն ուսումնասիրվել է իրենց և ՀՀ պաշտպանության նախարարության վարչական ապարատի իրավաբանական վարչության կողմից և ուսումնասիրության արդյունքում պարզել, որ «Է. Մ-ը հանդիսանում է ՀՀ քաղաքացի (նաև զինապարտ), քանի որ անկախ նրա ծնվելու վայրից, 1988թ. ապրիլին նրան տրվել է ՀԽՍՀ քաղաքացու ծննդյան վկայական և «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի հոդվածի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն նա ճանաչվում է ՀՀ քաղաքացի: ՀՀ քաղաքացի է ճանաչվում նաև նույն օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն: Հաշվի առնելով այդ հանգամանքը, Է. Մ-ը ենթակա է գորակոչի ՀՀ զինված ուժեր:

ՀՀ միգրացիոն գործակալությունը պատասխանել է, որ. «Է. Մ-ը հանդիսանում է Ադրբեջանից բռնագաղթած անձ: «Փախստականների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ՀՀ-ում փախստականի կարգավիճակ չի ստացել: ՀՀ-ում փախստականի կարգավիճակ ստանալու համար պետք է սահմանված ձևի դիմում ներկայացնի միգրացիոն գործակալություն: Մինևույն ժամանակ հայտնել է, որ փախստականի կարգավիճակ կարող է տրվել այն անձին, ով «Փախստականների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պատճառով չի կարող օգտվել իր քաղաքացիության պատկանելիության պետության պաշտպանությունից կամ չունենալով որևէ պետության քաղաքացիություն չի կարող վերադառնալ իր նախկին հիմնական բնակության վայրի պետություն»:

Չավեշտային այն է, որ պետական համապատասխան մարմինները հաշվի չեն առել այն հանգամանքը, որ Է. Մ-ի ծննդյան փաստը հաստատող փաստաթուղթը Ադրբեջանի Դաշքեսանի շրջանի Կուշչիի հիվանդանոցի 13.04.1988թ. տեղեկանքն է և նրա փախստականի կարգավիճակը հաստատող վկայականը, որը տրամադրվել է ՀՀ լիազոր մարմնի կողմից և, որ ծննդյան վկայականը դա դեռևս բավարար չէ անձին ՀՀ քաղաքացի ճանաչելու համար:

ՀՀ անձնագրային և վիզաների վարչությունից տեղեկացվել է, որ Է. Մ-ը չի ընդունել ՀՀ քաղաքացիություն և չի ստացել ՀՀ քաղաքացու անձնագիր:

Միանշանակ է, որ տարածքային զինվորական կոմիսարիատի կողմից Է. Մ-ին հաշվառելու, գորակոչման ենթարկելու և այդ նպատակով բուժզննության ներկայանալու ծանուցումն ապօրինի է, որի չի բխում ՀՀ սահմանադրության 46-րդ, «Ձինապարտության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածների և «Փախստականների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներից և Տավուշի մարզի առաջին ստյանի դատարանը 2007թ. մայիսի 22-ին թիվ 5-87-2007 վճռով բավարարել է փախստական

Է. Մ-ի դիմումը՝ անվավեր ճանաչելով նրան քանակ գորակոչելու ծանուցագիրը: Սույն վճիռը չի բողոքարկվել և 06.06.2007թ. մտել է օրինական ուժի մեջ⁴:

Պաշտպանական գերատեսչությունը հատուկ ուշադրություն պետք է դարձնի փախստականի կարգավիճակ ունեցող երիտասարդների, փախստականներից ծնված երեխայի, ծնողներից մեկի կողմից ՀՀ քաղաքացիություն ընդունելու փաստերին և այլն:

Օրինակելի է պետք է համարել հետևյալ գործերում պաշտպանական գերատեսչության դրսևորած մոտեցումը: Փախստական Ա.Խ-ի գործով ՀՀ պաշտպանության նախարարությունը իր՝ 10.10.2007թ. թիվ 679 գրությամբ հայտնել է, որ Ա.Խ-ին փախստականի վկայականը տալու ժամանակ (2005թ.) նրա ծնողներն ունեցել են փախստականի կարգավիճակ, իսկ մինչև նրա 18 տարին լրանալը ՀՀ քաղաքացիություն է ընդունել (2006թ) միայն նրա հայրը, ինչպես նաև Ա. Խ-ը «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն չի դիմել քաղաքացիությունը ձեռք բերելու համար և «Փախստականների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի (ա-գ) կետերի համաձայն չի կորցրել փախստականի կարգավիճակը: Հետևաբար, ՀՀ զինված ուժեր գորակոչվելու ենթակա է միայն կամավորության սկզբունքով:

Գ. Պահեստագործի սպաների նկատմամբ օրենքի կիրառման առնաձևահատկությունները:

Մտահոգիչ է զինվորական ծառայության չգորակոչված պահեստագործի սպաների նկատմամբ քննարկվող օրենքի կիրառման պրակտիկան: Օրենքի 2-րդ հոդվածի վերջին պարբերության համաձայն «պարտադիր զինվորական ծառայության չգորակոչված (գորակոչից խուսափած) և 35 տարին լրացած պահեստագործի սպաները յուրաքանչյուր խուսափած գորակոչի դիմաց կարող են մուծել նվազագույն աշխատավարձի 200-պատիկի չափով վճար, իսկ պարտադիր զինվորական ծառայության չգորակոչված (գորակոչից խուսափած) և մինչև 35 տարին լրանալը "Ձինապարտության մասին" ՀՀ օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում ստանալու հիմքեր ձեռք բերած պահեստագործի սպաները՝ մինչև ազատման կամ տարկետման իրավունք ձեռք բերելը յուրաքանչյուր խուսափած գորակոչի դիմաց՝ նվազագույն աշխատավարձի 100-պատիկի չափով վճար»:

Ներկայումս պահեստագործի սպաների ծրագրով ռազմական պատրաստություն կատարվում է միայն Երևանի ՄԽ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանում, և այդ ուսանողներն ավարտելով բուիը համարվում են պահեստագործի սպաներ: Որպես կանոն յուրաքանչյուր տարի ՀՀ Նախագահը հրամանագիր է ստորագրում նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին անցկացնելու ՀՀ զինված ուժերի պահեստագործի առաջին խմբի բժշկական կազմի՝

⁴ ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի 22.05.2007թ. թիվ 5-87-2007 վճիռ:

մինչև 35 տարեկան սպաների գորակոչ երկու տարի ծառայության ժամկետով: Այդ հրամանագրի հիման վրա ՀՀ կառավարությունը սահմանում է գորակոչի ենթակա բժշկական կազմի թվաքանակը, որը 2000-2007 թթ. տատանվում է 60-85 բժիշկ-մասնագետի շրջանակներում: Նշենք, որ 2004 թվականից հետո ՀՀ կառավարության այդ որոշումներով այլևս չեն կարգավորվում նախատեսված թվի շրջանակում՝ բժշկական մասնագիտությունների տեսակների բաշխման համամասնությունը՝ այդ գործընթացի իրականացումը վերապահելով պաշտպանության նախարարությանը: Հարց է ծագում, իսկ ՀՀ կառավարության նախատեսած թվի շրջանակում զինկոմիսարիատներն ինչ սկզբունքներով և ինչպես են որոշում գորակոչի կանչվող բժիշկներին: Ուսումնասիրություններից սկնհայտ է, որ այս գործընթացի օրենսդրական կարգավորման հստակ մեխանիզմների բացակայությունը և զինկոմիսարիատների սուբյեկտիվիզմի դրսևորման ընդարձակ հնարավորությունը կասկածի տակ է դնում դրա իրականացման օրինականությունը:

Ռ. Ս-ը ավարտելով ՄԴ. Հերացու անվան Երևանի բժշկական համալսարանը մեկնում է Ռուսաստան՝ նեղ մասնագիտացում (օրդինատորա) անցնելու և հետագայում աշխատելու նպատակով: Սակայն գորակոչ հայտարելու ժամանակ նրան կանչում են զինկոմիսարիատ: Այնուհետ նրան ընդգրկում են նախատեսված թվաքանակի շրջանակում գորակոչի ենթակա բժիշկների ցանկում և չներկայանալու համար վերջինիս նկատմամբ, որպես զինվորական ծառայությունից խուսափած անձ քրեական գործ է հարուցվում:

Զինկոմիսարիատների կողմից կամընտրական եղանակով այս կամ այն բժշկին գորակոչի ենթակա համարելն, իսկ նույն իրավաճակում միևնույն մասնագիտության մեկ ուրիշին չգորակոչելն բազմաթիվ հարցեր է առաջացնում, որոնք հրատապ լուծումներ են պահանջում:

2. Օրենքի կիրառման ընթացքում հանդիպող ընթացակարգային բնույթի խոչընդոտները/բաց թողումները:

Օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ *«Պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացին դիմում է ներկայացնում այն զինվորական կոմիսարիատ, որտեղ հաշվառված է»:* Նշված դիմումի ներկայացմամբ սկսվում է Օրենքով և այլ իրավական ակտերով կարգավորվող գործընթացը:

• Օրենքով և ՀՀ կառավարության 04.03.2004թ. թիվ 264 որոշմամբ դիմումի ներկայացման խնդրի թերի կարգավորումն է, որ առաջին հերթին քաշքշուկների պատճառ է հանդիսանում: Մասնավորապես, Օրենքի շրջանակում հատակ լուծում չի տրվում այն հարցին, թե կարո՞ղ է արդյոք պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացու փոխարեն լիազորագրի կամ ներկայացուցչի իրավունքները հիմնավորող այլ օրինական փաստաթղթի հիման վրա հանդես գալ ներկայացուցիչը: Եթե այո, ապա օժտված է արդյոք նա բոլոր իրավունքներով՝ դիմում (կից փաստաթղթերով) ներկայացնելը, ընթացակարգային գործընթացի բոլոր փուլերին որպես ներկայացուցիչ հանդես գալը, սահմանված վճարը մուծելը, քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ փաստաթղթերը և զինվորական գրքույկ ստանալը: Օրենքում ներկայացուցչի մասին որևէ հիշատակում չկա և փաստորեն հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ դիմում կարող է ներկայացնել միայն *«պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացին»:* ՀՀ կառավարության թիվ 264 որոշման Հավելված 2-ի 2-րդ կետով փորձ է արվել լրացնել Օրենքի դրույթը⁵ և սահմանվել է, որ *«սույն կարգի համաձայն քաղաքացին կամ նրա օրինական ներկայացուցիչը դիմում է ներկայացնում այն զինվորական կոմիսարիատ, որտեղ նա հաշվառված է»:* Նկատենք, ավելացված է *«օրինական ներկայացուցիչ»* արտահայտությունը, մինչդեռ գորակոչից խուսափած անձինք չափահաս են և որպես կանոն այլևս չունեն օրինական ներկայացուցիչներ:

Քաղաքացի Հ. Վ-ը 1989թ.-ին արտագաղթել է Հայաստանից և բնակվում է Բուլղարիայում: Տեղեկանալով Օրենքի ընդունման մասին՝ լիազորում է Հայաստանում բնակվող իր ընկերոջը ներկայանալ զինվորական կոմիսարիատ, ճշգրտել պահանջվող փաստաթղթերի ցանկը և կատարվելիք Օրենքով սահմանված գործողությունները: Սահմանված բոլոր փաստաթղթերը դիմումին կից պատշաճ կարգով ներկայացվում են զինվորական կոմիսարիատ քաղաքացի Հ. Վ-ի ներկայացուցչի կողմից: Օրենքով նախատեսված բոլոր գործողությունները, այդ թվում Օրենքով սահմանված վճարի մուծումն իրականացվում է ներկայացուցչի կողմից: Սակայն քաղաքացի Հ. Վ-ի զինվորական գրքույկի հանձնումը ներկայացուցչին, անհիմն պատճառաբանություններով ձգձգվում և ի վերջո գրավոր մերժվում է: Թե՛ դատախազության և թե՛ պաշտպանական գերատեսչության պաշտոնատար անձինք

⁵ Հանդիսանում է սահմանված կարգի լախսումամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների դիմումները ներկայացնելու, քննարկելու և դրանց պատասխանելու կարգն ու ժամանակացույցը:

պահանջում են, որ քաղաքացի Հ. Վ-ն անձամբ ներկայանա և ստանա այդ փաստաթուղթը: Ներկայացուցչի այն փաստարկին, որ իր ներկայացրած լիազորագրում կոնկրետ նշված է նաև քաղաքացի Հ. Վ-ի գինվորական գրքույկը ստանալու լիազորությունը (իրավունքը)՝ օգտագործելով Օրենքում առկա բացթողմը նրան մերժում են այն հիմքով, որ ինքն անձի օրինական ներկայացուցիչ չի հանդիսանում, իսկ համաձայն ՀՀ կառավարության թիվ 264 որոշման դիմում ներկայացնելու, հետևաբար և նշված փաստաթղթերը պահանջելու իրավունք ունի «օրինական ներկայացուցիչ»-ը:

Վերոհիշյալ օրինակում նշված խնդիրը ստանում է իր լուծումը պաշտպանական գերատեսչության հատուկ հրահանգով, սակայն իրավական նորմի մեջ «օրինական ներկայացուցիչ» արտահայտության նախատեսումը մեր կարծիքով կատարվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան հոդվածների անտեսումով և ինքնին հակասում է Օրենքի տրամաբանությանը, նեղացնում է այն անձանց շրջանակը, ովքեր կարող են Օրենքով նախատեսված ընթացակարգի համար դիմել ներկայացուցչի (այլ ոչ թե օրինական ներկայացուցչի) միջոցով⁶:

- Շատ են ընթացակարգային խնդիրները կապված Օրենքով նախատեսված դիմումի քննարկման և քաղաքացուն պատասխանի տրամադրման ժամկետների հետ: Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն, դիմումը քննարկվում է և քաղաքացուն պատասխանը տրվում է մեկ ամսվա ընթացքում: Լրացուցիչ ուսումնասիրություն և ստուգում պահանջող դիմումների դեպքում պատասխանը պետք է տրվի երկու ամսից ոչ ուշ: Դիմումների քննության մեկամսյա ժամկետը համապատասխանում է նաև «Վարչական վարույթի և վարչարարության հիմունքների մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետներին: Խնդիրը կայանում է նրանում, թե որքանով է հիմնավորված Օրենքով լրացուցիչ մեկ ամիս ժամկետի ավելացումը՝ չնշելով, թե ինչ գործողությունների կամ ընթացակարգերի իրականացման համար է նախատեսվում այն:

Վարչական բնույթի քաշքշուկների վերացման համար Օրենքով (ՀՀ կառավարության որոշմամբ) առավել նպատակահարմար կլինեք նորմեր նախատեսել որոշում կայացնելու գործընթացի և համապատասխանաբար ժամկետների կասեցման մասին, որպեսզի իրավասու մարմինների ներգրավմամբ և օրենսդրությամբ սահմանված կարգով անհրաժեշտ փաստերը պարզելուց հետո կայացվի Օրենքով նախատեսված որոշումը:

Այս առումով հատկապես խնդիր է Օրենքի շրջանակներում Հայաստան վերադարձած և դիմում ներկայացրած անձանց իրավական կարգավիճակի հարցը, որոնք օգտվելով Օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ պարբերությամբ սահմանված իրենց իրավունքից, մերժման դիմումի պատասխանն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում չհամաձայնվելով դիմումի պատասխանի հետ, այն բողոքարկել են դատարան, և գործի լուծումը ամիսներով ձգձգվում է:

⁶ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 34-րդ, 35-րդ հոդվածների համաձայն՝ օրինական ներկայացուցչի միջոցով կարող են ներկայացվել միայն անչափահասների, դատարանով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձանց շահերը, որոնց հետ քննարկվող Օրենքը որևէ առնչություն չի կարող ունենալ:

- Օրենքի ընթացակարգային վերլուծության առումով հարց է առաջանում դիմումների «վերադարձման» և «մերժման» ինստիտուտների կիրառման վերաբերյալ, որոնք տարբեր իրավական հետևանքներ առաջացնող ակտեր են:

Որոշման 2-րդ հավելվածի 7-րդ կետի համաձայն *«քաղաքացու դիմումի վերաբերյալ բացասական որոշում ընդունվելու դեպքում դիմումատուին ուղարկվում է պատասխան գրություն, որում նշվում են դիմումի մերժման հիմքերը»*: Օրենքում և գործընթացը կարգավորող մնացած իրավական ակտերում չեն թվարկվում մերժման հիմքերը: Ենթադրում է, որ դրանք կարող են լինել Օրենքի 2-րդ հոդվածում թվարկված ըստ էության նյութաիրավական հիմքերի կամ դրանց գոյությունը հավաստող փաստաթղթերի բացակայությունը: Սակայն նման «անալոգիան» չենք կարող տարածել դիմումների «վերադարձելիության» ինստիտուտի նկատմամբ: Օրենքում բացակայում է որևէ դրույթ, որը հստակորեն կկարգավորեր դիմումների վերադարձման գործընթացը, մասնավորապես նախատեսված ժամկետում փաստաթղթերում առկա թերությունների կամ բաց թողումների շտկման կարգը: Այսօր գործում է հետևյալ պրակտիկան. զինկոմիսարիատների կողմից միջգերատեսչական հանձնաժողով ներկայացված դիմումները անհրաժեշտ փաստաթղթերով մինչև հանձնաժողովի նիստի օրակարգ ընդգրկելը, նախապես ստուգվում են ամբողջականության և իսկության առումով: Դրանցում թերությունների առկայության դեպքում այն միջգերատեսչական հանձնաժողովի նախագահի կողմից հետ է վերադարձվում զինկոմիսարիատ շտկելու պահանջով: Քանի որ զինվորական ծառայությունից խուսափած քաղաքացիների կողմից ներկայացվող փաստաթղթերի մի մասը կեղծ են, գործընթացի պատասխանատուներին թույլ է տալիս առաջարկելու, որպեսզի դրանք՝ նախապես ենթարկվեն համապատասխան դատաձեռագրաբանական փորձաքննության, որի իրականացման իրավական մեխանիզմներն ու պրակտիկ հնարավորություններն այսօր բացակայում են:

Իհարկե, այս խնդրի հետ կապված ծագում են որոշակի հարցեր.

ա/ Արդյոք միջգերատեսչական հանձնաժողով ներկայացված բոլոր գործերը չպետք է միանշանակ ներառվեն հանձնաժողովի օրակարգ,

բ/ Որքանով է իրավաչափ, երբ դրանք ենթարկվում են որևէ «նախնական ստուգման» կամ «դիտարկման» և ով է լիազորված անցկացնելու ու ինչ կարգով է կազմակերպվում այն,

գ/ Արդյոք միջգերատեսչական հանձնաժողովը պատճառաբանված ու հիմնավորված որոշում կայացնում է գործերի վերադարձնելու վերաբերյալ և ինչու այն անմիջականորեն չի ուղարկվում դիմումատուին:

- Օրենքի իմպլեմենտացիայի առումով նպատակահարմար է ուշադրություն դարձնել նաև

զինծառայությունից խուսափած քաղաքացիների դիմումների քննարկման գործընթացում հանրապետական հանձնաժողովի դերակատարությանը:

Հանրապետական հանձնաժողովը՝ ՀՀ կառավարության թիվ 264-րդ որոշման 1-ին հավելվածի համաձայն կազմված է միայն պետական բարձրագույն պաշտոններ զբաղեցնող անձանցից՝ ՀՀ պաշտպանության նախարար (հանձնաժողովի նախագահ), ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, պաշտպանության նախարարի առաջին տեղակալ (հանձնաժողովի նախագահի տեղակալ), ՀՀ առողջապահության նախարար, ՀՀ կրթության և գիտության նախարար, ՀՀ ոստիկանության պետ, ՀՀ կառավարության աշխատակազմի վարչական մարմինների վարչության պետ (հանձնաժողովի քարտուղար)⁷:

Այդ հանձնաժողովի գործառույթն սահմանափակվում է միջգերատեսչական հանձնաժողովի կայացրած բոլոր որոշումների «կրկնակի» հաստատմամբ կամ գործերի՝ նույն հանձնաժողով «լրացուցիչ քննարկման» ուղղարկմամբ՝ արձանագրության մեջ նշելով դրանց պատճառները: Այն չի կարող ըստ էության մերժել դիմումը: Այն կարծես հանդիսանում է միջգերատեսչական հանձնաժողովի կայացրած որոշումների կամ գործողությունների «բարձր մակարդակով» հաստատող մարմին՝ միաժամանակ ստանձնելով յուրահատուկ «երաշխավորողի» դեր:

Հարց է առաջանում.

ա. Արդյոք հանրապետական հանձնաժողովը հանդիսանում է միջգերատեսչական հանձնաժողովի նկատմամբ վերադաս և վերահսկող մարմին,

բ. Ինչ կարգով են ընդունվում հանրապետական հանձնաժողովի որոշումները, գոյություն ունի արդյոք այդ հանձնաժողովի կողմից դիմումների քննարկման՝ կոնկրետ որևէ իրավական ակտով սահմանված կարգ,

գ. Ինչ համամասնությամբ են ընդունվում հանրապետական հանձնաժողովի որոշումները: Եթե անդամներից որևէ մեկը համաձայն չէ կայացված որոշման հետ, արդյոք հնարավորություն ունի ներկայացնելու հատուկ կարծիք կամ դիտողություն,

դ. Հանրապետական հանձնաժողովի որոշումներն արդյոք վարչական կարգով ենթակա են բողոքարկման և եթե այո ապա, որ մարմինն է իրավասու վերանայել կայացված ակտերը:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում ձեռք բերված տեղեկատվությունը թույլ է տալիս նշել, որ հանձնաժողովը որպես այդպիսին նիստեր չի գումարում, այլ նիստի արձանագրությունները կազմվում է պաշտպանության նախարարության կողմից և

⁷ՀՀ կառավարության 2008թ. հունիսի 5-ի թիվ 594-Ն որոշման համաձայն կառավարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումները վերակազմակերպվել են, որի արդյունքում վարչական մարմինների վարչությունը վերանվանվել է պետաիրավական վարչության:

«ձևականորեն» ներկայացվում հանձնաժողովի անդամների ստորագրմանը: Օրենքի գործածության ողջ ընթացքում արձանագրվել են ընդամենը 3-4 դեպք է, երբ հանրապետական հանձնաժողովի «անունից» համապատասխան պատճառաբանությամբ գործն ուղղարկվել է միջգերատեսչական հանձնաժողով՝ լրացուցիչ քննարկման:

- Ընթացակարգային գործընթացում վերջնական և թերևս ամենակարևոր փուլերից է Օրենքով սահմանված վճարների մուծման փուլը:

Օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ *դիմումի պատասխանն ստանալուց հետո տասնօրյա ժամկետում Օրենքով սահմանված վճարները մուծվում են բանկային համակարգի միջոցով այդ նպատակի համար քացված հատուկ հաշվին*: Կառավարության վերոնշյալ որոշմամբ սահմանված կարգի 7-րդ կետի համաձայն՝ քաղաքացու դիմումի վերաբերյալ դրական որոշում ընդունելու դեպքում դիմումատուին ուղարկվում է պատասխան գրություն, որում նշվում են օրենքով սահմանված վճարները մուծելու համար բանկային հաշվի համարը և վճարը մուծելու վերջնական ժամկետը: Քաղաքացուն ուղղված գրությունում վճարը մուծելու վերջնական ժամկետի ամրագրումը չի բխում օրենքի տրամաբանությունից, քանի որ վճարի մուծման ժամկետը սկսում է հոսել՝ զինվորական ծառայություն չանցած քաղաքացու կամ լիազորված ներկայացուցչի կողմից պատասխան գրությունը ստանալուց հետո:

Օրինակ՝ քաղաքացի Մ. Պ-ին միջգերատեսչական հանձնաժողովի նախագահի գրությամբ պատասխան է ուղարկվել 08.12.04թ.առ այն որ ըստ Ձեր դիմումի «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքի համաձայն զինհաշվառման կարգավիճակի հարցը լուծելու վերաբերյալ որոշումը քննարկվել է միջգերատեսչական հանձնաժողովում և կայացված որոշումը հաստատվել է հանրապետական հանձնաժողովի կողմից:

Նշված օրենքի 5-րդ հոդվածի համաձայն Գուք պարտավոր եք օրենքով սահմանված վճարը, որը կազմում է 330 000 դրամ 10 օրյա ժամկետում մուծել ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության «ԵՐԵՎԱՆԻ N 1 ՏԵՂԱԿԱՆ ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ԲԱԺԱՆՍՈՒՆՔ /ՏԳԲ/ ՀԱՇԻՎ 9000018113010 ՍՏԱՅՈՂ ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» (բնակավայրերում կարող եք մուծել տարածքային գանձապետարանի միջոցով):

Անդորագիրը 3 օրինակից ներկայացնել միջգերատեսչական հանձնաժողով /ք. Երևան, Մոսկովյան-5/, մինչև 2004թ-ի դեկտեմբերի 20-ը:

Նշված ժամկետում վճարը չմուծելու և անդորագիրը միջգերատեսչական հանձնաժողով չներկայացնելու դեպքում այն չի ընդունվում»:

Մ. Պ-ը պատասխանը ստանում է 2004թ. դեկտեմբերի 18-ին և չի հասցնում պատասխանում նշված ժամկետում վճարել: Մինչդեռ վճարման 10-օրյա ժամկետը պետք է սկսվեր հաշվարկվել տվյալ թվականի դեկտեմբերի 18-ից սկսած:

Ընթացակարգային բնույթի խնդիր է նաև կարգի նույն կետով նախատեսված դրույթն առ այն, որ *պատասխան գրությունում նշված ժամկետում վճարը չմուծելու դեպքում այն չի ընդունվում*: Պրակտիկայում արձանագրվել են մի շարք դեպքեր, երբ վճարը սահմանված ժամկետում չի մուծվել ասենք պատասխան գրությունում գումարը մուծելու վերջնական ժամկետը կամ բանկային հաշվի համարը սխալ նշելու կամ բանկային սխալ փոխանցման կամ

գումարը վճարող անձի կամքից անկախ այլ հանգամանքների հետևանքով: Օրենսդրությամբ նշված չէ ընթացակարգային բնույթի կարգավորող որևէ նորմ, որը կսահմանի բաց թողած ժամկետի վերականգման կամ առկա որևէ սխալի շտկման հնարավորություն: Հարց է ծագում, ու՞մ պետք է ուղղված լինի նմանատիպ դիմումները՝ զինվորական կոմիսարիատի՞ն, մինչգերատեսչական հանձնաժողովի՞ն, հանրապետական հանձնաժողովի՞ն թե՞ դատախազությանը:

Քիչ չեն այն դեպքերը, երբ քաղաքացին դիմել է տարածքային զինկոմիսարիատ, գործը ներկայացվել է մինչգերատեսչական հանձնաժողով, կայացվել է դրական որոշում, սակայն քաղաքացին տասնօրյա ժամկետում չի մուծել Օրենքով սահմանված վճարն՝ անսպասելի ֆինանսական ծանր վիճակի, Օրենքը սխալ ընկալած լինելու և համապատասխան գումար նախատեսած չլինելու, կամ անվտուրության հետևանքով:

Խնդրի լուծման համար ցանկալի կլիներ կիրառել առաջարկվող հետևյալ հնարավոր այլընտրանքային մոտեցումները.

ա/ Որոշակի ճկունություն մտցնել այս հարցում, մասնավորապես նախատեսելով վճարների մուծման ժամկետի երկարաձգում,

բ/ Օրենքով սահմանված վճարի ընդհանուր գումարից որոշակի մասը տասնօրյա ժամկետում վճարվելու դեպքում մյուս մասը գանձել տարածամեկտ մասնակի վճարումների միջոցով:

3. Քրեական հետապնդման դադարեցում:

• ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի կիրառելիությունը քննարկվող օրենքի համատեքստում:

«Հաշտեցման ինստիտուտն» առաջին հերթին ուղղված էր ոչ թե զինծառայության հարցի լուծման կապակցությամբ գորակոչից խուսափած քաղաքացի, զինկոմիսարիատ, միջգերատեսչական ու հանրապետական հանձնաժողով հարաբերությունների կարգավորմանը, այլ՝ ՀՀ քր. օր-ի 327-ով նախատեսված հանցագործության համար քրեական պատասխանատվության հարցի լուծմանը:

ՀՀ քրեական օրենսգրքի 327 հոդվածի համաձայն՝

1. Ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական գորակոչից, վարժական հավաքից կամ գորահավաքից խուսափելը՝ այդ ծառայությունից ազատվելու՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության դեպքում՝

պատժվում է կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատագրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) իրեն մարմնական վնասվածք պատճառելու կամ հիվանդության սինուլյացիայի ճանապարհով,

2) փաստաթուղթ կեղծելու կամ խաբեության այլ ճանապարհով՝

պատժվում է կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատագրկմամբ՝ մեկից հինգ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝

պատժվում է ազատագրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով»:

Օրենքի ճիշտ իմպլեմենտացիայի առումով կարևոր է դրա և ՀՀ քր. օր-ի 327-րդ հոդվածի միջև գործածության կապի պարզաբանումը, ինչը չի «լուսաբանված» տվյալ օրենքում: Օրենքի գործածությունը չի տարծվում այլընտրանքային ծառայությունից կամ վարժական հավաքից խուսափելու դեպքերի վրա, այն սահմանափակվում է միայն ժամկետային պարտադիր զինվորական ծառայության գորակոչից խուսափելու հետևանքով հարուցված քրեական գործերի շրջանակով:

Անհրաժեշտ է պարզել արդյո՞ք ՀՀ քր. օր-ի 327-րդ հոդվածի որակյալ (2 և 3) մասում նախատեսված դեպքերի նկատմամբ տարածվում է օրենքի գործողությունը: Օրենքի տառացի

մեկնաբանությունից պարզ է դառնում, որ ժամկետային պարտադիր զինվորական ծառայության գորակոչից խուսափել ասելով պետք է հասկանալ ամբողջությամբ, այդ թվում և ՀՀ քր. օր-ի 327-րդ հոդվածի երկրորդ մասով նախատեսված եղանակներով (իրեն մարմնական վնասվածք պատճառելով, փաստաթղթեր կեղծելով և այլն): Հետևաբար, Օրենքով նախատեսված «հաշտության» ռեժիմը տարածվում է նաև ՀՀ քր. օր-ի 327-րդ հոդ-ի որակյալ մասերով պարտադիր զինծառայությունից խուսափածների նկատմամբ:

Չինծառայության գորակոչից խուսափելը տևող հանցագործություն է, և այն ավարտված է համարվում անձի բռնվելու կամ մեղայականով ներկայանալու պահին: Կա տեսակետ, որ այն դեպքերում, երբ անձը մեղայականով չի ներկայացել կամ չի ձերբակալվել, սակայն առաջացել են նրա մոտ զինծառայության գորակոչվելու պարտականության վերանալու հիմքեր, ապա ՀՀ քր. օր-ի 327-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունն ավարտված է համարվում: Այս հարցը ունի կարևոր նշանակություն քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը հաշվարկելիս:

Անհրաժեշտ է քննարկել կարող է արդյո՞ք գորակորչից խուսափած անձը Օրենքն իր նկատմամբ կիրառելու ցանկությունը հայտնել ասենք իրավապահ մարմինների կողմից «բռնվելուց» հետո: Այստեղ իրավակիրառները չեն դրսևորել միանշանակ մոտեցում: Այսպես՝

ՀՀ և ՌԴ միջև կնքված «Ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման մասին» միջկառավարական համաձայնագրի համաձայն Ա. Պ. (ծնված 1979թ.) 2001թ. մեկնել է Մոսկվա՝ ԱԷԿ-ի շահագործման համառոտական գիտահետազոտական ինստիտուտի ասպիրանտուրայում սովորելու նպատակով: Նրա տեխնիկական գիտությունների թեկնածուական աշխատանքի պաշտպանությունը նշանակված է եղել 29.06.2005թ-ին, որի մասին Ա. Պ. գրավոր տեղյակ է պահել տարածքային զինկոմիտարիատին: 2004թ. նոյեմբերի 29-ին նույն բովանդակությամբ ՌԴ Ատոմային էներգետիկայի նախկին փոխնախարար կողմից նամակ-խնդրանք է ուղարկվել ՀՀ նախագահին, Ա. Պ. տարկետման ժամկետի երկարացման վերաբերյալ, սակայն 12.01.05թ.-ին ՀՀ կառավարության աշխատակազմից ստացվում է պատասխան, որ այն հնարավոր է միայն ՀՀ կառավարության 29.08.02թ. թիվ 1394-Ն որոշման կարգի համաձայն «Պարտականության կատարումն ապահովող գրավի» պայմանագիր կնքելու միջոցով: Հաշվի առնելով այդ հանգամանքը Ա. Պ. համապատասխան թղթերը, իր մոր միջոցով, ներկայացնում է ՀՀ կրթության և գիտության նախարարություն, որտեղից էլ՝ ՀՀ պաշտպանության նախարարություն, ուր այն մերժվում է այն պնդմամբ, որ քանի որ ուսումնառությունն արդեն ավարտվել է 2004թ. նոյեմբերին, իսկ դիսերտացիոն աշխատանքի պաշտպանության համար համաձայն «Չիննապարտության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի, զինծառայությունից տարկետում չի կարող տրվել: ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր մերժման պատասխանը ուղարկվում է այլ հասցեով և Ա. Պ. չի իրազեկվում այդ մասին: 2005թ. ապրիլի 8-ին որոշում է կայացվում Ա. Պ. նկատմամբ ՀՀ քր. օր-ի 327-րդ հոդվածի 1-ին մասով, որպես մեղադրյալ ներգրավելու մասին, ինչպես նաև նրա նկատմամբ Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքների առաջին ստյանի դատարանի 12.04.2005թ. որոշմամբ խափանման միջոց կալանք է ընտրվում և նրան հայտնաբերելու նպատակով հայտարարվում է հետախուզում: 27.07.05թ. հետախուզվող Ա. Պ. հայտնաբերվում է: «Ս. Գ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կետրոն» ՀԿ-ի գողմից գրություններ է ներկայացվում ՀՀ պաշտպանության նախարարին և Չինվորական կոմիտարին՝ խնդրելով տվյալ քաղաքացու նկատմամբ կիրառելու Օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները: ՀՀ պաշտպանության նախարարի վարչական ապարատի իրավաբանական վարչության պետի դրական եզրակացության արդյունքում այդ անձի նկատմամբ կիրառվում է Օրենքը և խուսափած

ժամանակահատվածի համար նախատեսված չափի գումար վճարելուց հետո, վերջինիս նկատմամբ քրեական գործը կարճվում է:

Այս օրինակում անձն իր վրա օրենքի գործողությունը տարածելու կամահայտնությունն դրսևորել է կալանավորվելուց հետո, ինչը որ թույլ չտրվեց մեկ այլ մեծ աղմուկ բարձրացրած քրեական գործում՝ լրագրող Արման Բաբաջանյանի վերաբերյալ: Ա.Բ. փաստաթղթերը կեղծելու ճանապարհով խուսափել էր զինծառայության գորակոչվելուց և միայն հանցագործության բացահայտվելուց հետո էր արտահայտել Օրենքն իր նկատմամբ կիրառելու ցանկությունը, սակայն մերժվել էր և դատապարտվել ազատազրկման:

Իրավակիրառ պրակտիկայում «հաշտեցում» ակտի դրսևորման հնարավորություններն բավականին լայն են ընդունվում՝ նույնիսկ այն կիրառելի դարձնելով դատական վերջնական ակտից հետո: Այս առումով պետք է նկատել, որ Օրենքի մեջ որևէ հիշատակում չկա գորակոչից խուսափած այն անձանց վերաբերյալ, որոնք մինչև Օրենքի գործողության մեջ մտնելը գտնվում են քրեական գործով նախնական քննության փուլում, ենթարկվել են քրեական պատասխանատվության, կրում են քրեական պատիժը, կամ կրել են քրեական պատիժը, սակայն դեռ մարված կամ հանված չէ դատվածությունը: Ջորակոչից խուսափած նշված անձանց խնդրին չենք կարող չադրադառնալ մասնավորապես նկատի ունենալով քրեական իրավունքից մեզ հայտնի՝ բարենպաստ պայմաններ սահմանող քրեական օրենքի հետադարձ ուժ ունենալու կանոնը: Այս կանոնի համաձայն պետք է գորակոչից խուսափած այն անձանց վերաբերյալ, որոնք մինչև Օրենքի գործողության մեջ մտնելը.

ա/ գտնվում են նախնական քննության փուլում՝ կարճել քրեական գործի վարույթը,

բ/ ենթարկվել են քրեական պատասխանատվության, կամ կրում են քրեական պատիժը՝ ազատ արձակել,

գ/ կրել են քրեական պատիժը, սակայն դեռ մարված կամ հանված չէ դատվածությունը՝ վերացնել դատվածությունը և անձին համարել դատվածություն չունեցող անձ:

• Միջգերատեսչական հանձնաժողովի և դատախազության միջև աշխատանքի կազմակերպումը/բաժանումը:

Օրենքի 6-րդ հոդվածի համաձայն օրենսդրության խախտմամբ պարտադիր զինվորական ծառայության չգորակոչված, հետագայում 27 տարին լրացած կամ սահմանված կարգով պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ տարկետման հիմքեր ձեռք բերած քաղաքացուն, սույն օրենքով սահմանված վճարը մուծելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում տրվում է իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդումն դադարեցնելու մասին վարույթն

իրականացնող մարմնի որոշումը, ինչպես նաև նա ստանում է զինվորական գրքույկ և հաշվառվում պահեստագործում:

Կառավարության որոշմամբ սահմանվեց, որ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվելու է ՀՀ քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և ՀՀ քր. օր-ի 74-րդ կետով սահմանված կարգով: ՀՀ քր. դատ. օր-ի 35 հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի համաձայն քրեական գործի կարճման հիմքերից է, երբ անձը ՀՀ քր. օր-ի ընդհանուր մասի դրույթների ուժով ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից, իսկ ՀՀ քր. օր-ի 74-րդ հոդվածի համաձայն առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե պարզվի, որ իրադրության փոփոխման հետևանքով այդ անձը կամ նրա կատարած արարքը դադարել է հարության համար վտանգավոր լինելուց:

Քննարկվող Օրենքի համատեքստում իրադրության փոփոխության հիմքը դրսևորվում է հետևյալ կերպ՝

«...Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա. Ա. «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 04.03.04թ. թիվ 264-Ն որոշման համաձայն ամբողջությամբ վճարել է միջգերատեսչական հանձնաժողովի կողմից սահմանված վճարը, ուստի նրա կողմից կատարված արարքը կորցրել է հանրորեն վտանգավոր բնույթը, իսկ նրա անձը դադարել է հանրորեն վտանգավոր լինելուց, փոփոխվել է իրադրությունը...»

Ձինձառայությունից խուսափած քաղաքացիների նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու նպատակով միջգերատեսչական հանձնաժողովը համապատասխան տարածքի դատախազին է ուղարկում հանրապետական հանձնաժողովի հաստատած որոշումը և սահմանված վճարի մուծված լինելը հաստատող անդորրագիրը: Իրավապահ մարմինների համար փաստորեն իրադրության փոփոխության հիմքը համարվում է միայն սահմանված վճարը ամբողջությամբ վճարելու փաստը և միջգերատեսչական հանձնաժողովի քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ տրված դրական եզրակացությունը:

Տարածքի դատախազը զինվորական ծառայություն չանցած քաղաքացու նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը մեկշաբաթյա ժամկետում ուղարկում է համապատասխան զինկոմիսարիատ: Փաստորեն, դատախազի կողմից քրեական գործի կարճումը դառնում է «մեխանիկական» գործընթաց, որի արդյունքում խախտվում են քրեական դատավարական մի շարք սկզբունքներ: Մինչդեռ այս գործընացում պետք է գործեր այն կոնցեպցիան, երբ ողջ պատասխանատվությունը և քրեական հետապնդման դադարեցման հարցերի լուծումը պետք է վերապահվեր դատախազությունը, իսկ միջգերատեսչական հանձնաժողովն ընդամենը պետք է դատախազությանը ներկայացներ մասնագիտական

բնույթի եզրակացություն⁸: Ուսումնասիրության ընթացքում մենք չհանդիպեցինք մի դեպքի, երբ դատախազությունն առարկեր միջգերատեսչական, հանրապետական հանձնաժողովի կայացրած որոշման դեմ՝ համարելով որ նրանք ճիշտ չեն գնահատել գործի հանգամանքները, սխալ են ընտրել դրույքաչափերը և մերժել քրեական հետապնդման դադարեցման պահանջը:

⁸ Քրեական քաղաքականության առաջնային պատասխանատուն հանդիսանում է դատախազությունը և հենց այս մարմինը պետք է քննի և ստուգի քրեական հետապնդման դադարեցման հիմքի՝ իրադրության փոփոխության գոյությունը, որը տվյալ պարագայում հանդիսանում են ոչ թե սահմանված չափի վճարը, այլ առաջին հերթին օրենքով սահմանված նյութաիրավական հիմքերի առկայությունը

4. ՕՐԵՆՔԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՆԿԱՏԱՍԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ:

Օրենքի կիրառման գործընթացի օրինականության և արդյունավետության ապահովման կարևոր երաշխիք է դրա նկատմամբ թափանցիկություն և լայն հանրային վերահսկողություն ապահովող մեխանիզմների նախատեսումը: Օրենքի գործողության թափանցիկության և հանրային վերահսկողության ցածր մակարդակը դրսևորվում է հետևյալ պատճառներով:

ա/ Հասարակության շրջանում իրազեկվածության ցածր մակարդակ է ապահովվել օրենքի ընդունման և դրանով իսկ սկիզբ դրվող գործընթացների վերաբերյալ:

բ/ Գործընթացում ներգրավված մարմինների միջև չճշգրտված փոխհարաբերություններ: Մինչգերատեսչական և հանրապետական հանձնաժողովների կազմակերպման և գործունեության օրենսդրական դրույթները որոշակի «ձևական» վերահսկողական հարաբերություններ են սահմանում, որը սակայն որևէ ընդհանրություն և կապ չունի գործընթացի թափանցիկության հետ: Բավական է միայն ուշադրություն դարձնել քաղաքացու դիմումը քննող հանձնաժողովների կազմին և դրանց գործունեության կարգին, որից անմիջապես ակնհայտ է, որ գործընթացի նկատմամբ լիովին բացակայում են հանրային վերահսկողությունը.

- քաղաքացու դիմումը քննարկող և որոշում կայացնող սուբյեկտների շարքում ընդգրկված չէ ոչ մի հասարակության ներկայացուցիչ, հասարակական կազմակերպություն
- որոշման կայացման կարգը և գործընթացը չեն նախատեսում հրապարակայնության որևէ տարր:

գ/. Ստացված գումարների ծախսման վերաբերյալ հաշվետվությունների բացակայություն: Ձինծառայությունից խուսափած քաղաքացիների նկատմամբ քրեական հետապնդման դադարեցման և դրա արդյունքում վճարված գումարների ծախսման գործընթացներն ամբողջովին գտնվում են պառլամենտական վերահսկողությունից դուրս: Ի դեպ ԱԺ պաշտպանության, ազգային անտվագնության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի կողմից ՀՀ պաշտպանության նախարարությանը հարցում է կատարվել Օրենքի գործողության ընթացքի և արդյունքների մասին /մասնավորապես՝ թե քանի զինծառայությունից խուսափած անձինք են դիմել սույն օրենքն իրենց վրա տարածելու խնդրանքով, որքան պահանջներն են բավարարվել կամ մերժվել, ինչքան գումար մինչ օրս մուտք եղել այդ նպատակով բացված հատուկ հաշվեհամարին, ինչպես են ծախսվել այդ գումարները և գործընթացին առնչվող այլ հարցեր: Ստացված տեղեկատվությունը հակասում է դատախազության կողմից տրամադրված

տեղեկատվությանը և որևէ նշում չի պարունակում, թե կոնկրետ ինչ նպատակով են ծախսվել ստացված գումարները:

Օրենքով սահմանված վճարները մուծելու արդյունքում ձևավորված դրամական միջոցների ուղղվածության և դրանց նպատակային ծախսման նկատմամբ չկա որևէ վերասկողության մեխանիզմ: ՀՀ կառավարության 11.05.2006թ. «սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների կողմից վճարվող գումարներն օգտագործման կարգի մասին» թիվ 594-Ն որոշման համաձայն այդ *«գումարներն օգտագործվում են ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների բավարարման համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ՀՀ պաշտպանության նախարարության արտաբյուջետային միջոցների գոյացման և օգտագործման կարգին համապատասխան»:* Համապատասխան պաշտոնյաների կողմից «զինվորական գաղտնիք»-ի վկայակոչմամբ Օրենքով սահմանված վճարների չափի և օգտագործման նպատակի մասին որևէ տվյալի չտրամադրելը խաթարում է այս գործընթացի թափանցիկությունը:

Ե Չ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն - Ա Մ Փ Ո Փ ՈՒ Մ

«Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքով սահմանվեց կոմպրոմիսային մի տարբերակ, երբ պետական մարմինն ու քաղաքացին հանդիսանում են գործարքի տարբեր կողմեր, որի պայմանները սահմանված են պետության կողմից և որի կնքման համար պահանջվում է քաղաքացու դիմումը (կամահայտնությունը): Օրենքի ընդունումը և կիրառությունն իր գործնական արդյունքներով ապացուցեց, որ նման փորձը հաջողված է:

Մանրամասն վերլուծության ենթարկելով օրենքը և վեր հանելով դրանում տեղ գտած թերություններն ու բաց թողումները փորձենք ամփոփ ձևով ներկայացնել մեր առաջարկությունները:

- Այս գործընթացը պետք է կրի շարունակական բնույթ: ՀՀ Գլխավոր դատախազի տեղեկալ Ա. Թամազյանի գրությամբ հայտնի դարձավ, որ 1992 աշնանային գորակոչից մինչև 2007թ. հոկտեմբերի 31ը պարտադիր զինվորական ծառայությունից խուսափելու հիմքով հարուցվել է 23498 քրեական գործ, որոնցից քննարկվող օրենքը կիրառվել է ընդամենը 1973 անձի նկատմամբ: Ընդ որում մինչև 2007 թվականի հոկտեմբերի 31ը 27 տարին լրացածների քանակը կազմում է 7401 անձ: Փաստորեն Օրենքի գործողությունը չի տարածվում մնացած 16097 անձի նկատմամբ, ինչը բացատրում է Օրենքի գործողության ժամկետը երկարացնելու անհրաժեշտությունը:

- «Քաղաքացիության մասին», «Փախստականների մասին» և «Զինապարտության մասին» ՀՀ օրենքների միջև հարմոնիզացիայի ապահովում, մասնավորապես հատուկ ուշադրություն դարձնել փախստականի կարգավիճակ ունեցող երիտասարդների, փախստականներից ծնված երեխայի, ծնողներից մեկի կողմից ՀՀ քաղաքացիություն ընդունելու, անչափաս տղայի ծնողների կողմից այլ երկրի քաղաքացիություն ստանալու փաստերին և այլն:

- Վերանայել սահմանված դրույքաչափերը, մասնավորապես անբացատրելի Օսկան վճարները այն դեպքում, երբ անձը ունի ասենք 3 երեխա:

- ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր դրույթների, 327-րդ հոդվածի և քննարկվող օրենքի միջև «փոխգործակցության» ապահովում: Քննարկվող օրենքի գործողության տարածումը այդ թվում ՀՀ քր.. օր-ի 327-րդ հոդվածով նախատեսված որակյալ մասի նկատմամբ:

- Պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների նկատմամբ հարուցված քրեական հետապնդման դադարեցման ակտի պրոցեսում հայեցակարգային

բնույթի փոփոխությունների անցկացում, որը կբերի դատախազության դերի բարձրացմանը: Մասնավորապես «հաշտեցման ակտի» պետք է կայանա դատախազի և «մեղադրվող անձի» միջև, իսկ միջգերատեսչական հանձնաժողովը ընդամենը պետք է այդ գործընթացում ապահովի գորակոչից խուսափած քաղաքացիների վերաբերյալ համապատասխան եզրակացությունների տրամադրումը: Դատախազը պետք է ուսումնասիրի օրենքի կիրառելիությունը կոնկրետ դեպքում, ինչպես նաև հետևի վճարի ճիշտ հաշվարկման կարգին:

- Հստակ իրավական չափանիշների և կարգավորման մեխանիզմների ներդրում ՀՀ կառավարության կողմից որոշակի կատեգորիայի քաղաքացիների զինվորական ծառայությունից ազատելու, ինչպես նաև տարկետում տալու վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

- Առանձնակի ուշադրություն դարձնել պահեստագործի սպաների գորակոչի ենթարկման գործընթացի իրավաչափության նկատմամբ: Մասնավորապես՝ գորակոչման ենթակա բժշկական կազմի թվաքանակի, դրա շրջանակում բժշկական մասնագիտությունների տեսակների բաշխման համամասնության որոշման, ինչպես նաև այդ անձանց գորակոչման գործընթացներում պատասխանատու պաշտոնատար անձանց սուբյեկտիվիզմի դրսևորման սահմանափակում:

- Օրենքի կիրառելիությունն ապահովող ընթացակարգային գործընթացի հստակության և պարզության ապահովում: Մասնավորապես՝ կամահայտնության դրսևորման լայն հնարավորությունների կիրառում, որը լիազոր մարմնի համար հիմք կհանդիսանա այդ անձի նկատմամբ Օրենքի գործողությունը տարածելու առումով: Ներկայացուցչի կողմից պատշաճ տրված լիազորագրի հիման վրա իրեն վստահորդի շահերի ներկայացում Օրենքով նախատեսված ողջ գործընթացում, այդ թվում բոլոր փաստաթղթերի և հատկապես զինվորական գրքույկի ստանալու հնարավորություն:

- Դիմումի քննարկման ժամկետների խստիվ պահպանում: Մասնավորապես՝ յուրաքանչյուր դեպքում ժամկետի երկարացման, ինչպես նաև լրացուցիչ փաստաթղթերի պահանջը պետք է հաստատվի իրավասու մարմնի կողմից կայացվող հիմնավորված և իրավաչափ որոշմամբ:

- Դիմումների կասեցման, մերժման և վերադարձման ինստիտուտների կիրառման հիմքերի հստակ ամրագրում:

- Օրենքով սահմանված չափի վճարների մուծման այլընտրանքային եղանակների՝ վճարման ժամկետի հետաձգում, տարաժամկետում, մասնակի վճարման կիրառման հնարավորություն:

- Ստացված պատասխանների վարչական կարգով բողոքարկման և լուծման եղանակների կատարելագործում և այդ ընթացքում դիմումատուի կարգավիճակի որոշում:

- Անհրաժեշտ է միատեսակ մոտեցում դրսևորել “բռնվելուց” հետո օրենքը տվյալ անձի նկատմամբ կիրառելու հնարավորությունը քննարկելիս: Գործնականում հանդիպեցին միմյանց հակասող որոշումներ, ինչը պետք է բացառել:

- Օրենքի՝ որպես բարենպաստ ակտի գործածության հետադարձ ուժ տալը:

- Օրենքի իմպլեմենտացիայի, հատկապես դիմումների քննարկման և լուծման ընթացքի առավել թափանցիկության և հանրային վերահսկողության ապահովող մեխանիզմների առավելագույնս ներդրում ու զարգացումը: Մասնավորապես՝ միջգերատեսչական և հանրապետական հանձնաժողովներում, որպես անդամներ հասարակական կազմակերպության ներկայացուցիչների ընդգրկելը, դիմումների քննարկման և լուծման դռնբացության ապահովումը՝ բացառությամբ օրենքով նախատեսված առանձին հիմնավոր դեպքերի:

- Օրենքի կիրառման հետևանքով մուծված գումարների նպատակային ծախսերի վերաբերյալ հաշվետվության մեխանիզմների կիրառում, մասնավորապես պառլամենտական վերահսկողության իրականացում դրանց նկատմամբ: